

# ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյալ խմբագրատան մէջ:

(Պատրաստողները գինում են ուղղակի  
Tiflis. Pechata „Mian“)

Խմբագրատանը բաց է առաւօտան 10—2 ժամ  
(Նախի կերակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԱՐԱՐԱՏԵԱՆ

### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վ.Ա.Ս.

### ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ

ՔՈՒԼԵՐԿԱՆ ԴԻ 25 ՓԵՏՐՈՒՄԻ 1879

#### ՅՈՂՈՒՄ 1.

Երբ արտան ընկերութիւնն պատուոյ ան-  
գամներ ունի, որք երեք դասի բաժանեալք են:

Ե. Թ. զ. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը.

Բ. Տ. Ե. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը.

Գ. Ս. շ. Ե. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը.

#### ՅՈՂՈՒՄ 2.

Նորա որք ընկերութեան ուսումնական կա-  
րեւոր ծառայութիւններ կը մատուցանեն, կամ  
ընկերութեան համար կարեւոր աշխատութիւն-  
ներ յանձն կ'առնուն մայրաքաղաքէս դուրս,  
կրնան ընկերութեան Թ. զ. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը.  
ընտրուի:

#### ՅՈՂՈՒՄ 3.

Նորա որք կը վճարեն տարեկան առ նուազն  
2 լիւր (սամանեան հաճախանի մէջ, 20 ո.  
Ուստի մէջ, և 50 ֆրանք Եւրոպայի մէջ,  
կրնան Տ. Ե. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը.  
ընտրուի:

#### ՅՈՂՈՒՄ 4.

Նորա որք ընկերութեան բարոյական մծ  
ծառայութիւն կը մատուցանեն, և կամ միան-  
գամ ընդ միշտ կը վճարեն առ նուազն 50 լիւր  
(սամանեան հաճախանի մէջ, 500 ուստի  
Ուստի մէջ, և 1200 ֆրանք Եւրոպայի մէջ,  
կրնան ընկերութեան Ս. շ. Ե. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը.  
ընտրուի:

#### ՅՈՂՈՒՄ 5.

Թ. զ. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. և տարեկան պատուոյ  
անգամն ընտրութիւնը Վործադիր Ժողովը  
կը կատարէ, և կը հաղորդէ Ընդհանուր Ժո-  
ղովը յառաջիկայ նիստին 'ի գիտութիւն:

#### ՅՈՂՈՒՄ 6.

Ս. շ. Ե. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. պատուոյ անգամն  
ընտրութիւնը Ընդհանուր Ժողովը կը կատարէ  
գաղանի քուէարկութեամբ, Ընդհանուր Ժողո-  
վը գիտանի գրաւոր առաջարկութեան վրա:

#### ՅՈՂՈՒՄ 7.

Ս. շ. Ե. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. պատուոյ անգամն  
յատուկ վկայագիր կը տրուի, ստորագրեալ և  
կնքեալ 'ի գիտաց ընկերութեան Ընդհանուր  
Ժողովը գիտանի:

#### ՅՈՂՈՒՄ 8.

Պատուոյ անգամք, կրնան ընկերու-  
թեան յառաջարկութեան համար իրենց ունե-  
ցած խորհուրդներն գրաւոր հաղորդել ընկերու-  
թեան Ընդհանուր Ժողովը, որ ըստ պատշաճ  
'ի նկատի կ'առնու, և այս մասին տուած որո-  
շումը կը հաղորդէ առաջարկող անդամին:

#### ՅՈՂՈՒՄ 9.

Եզգային և օտար ուսումնական կամ բարե-  
գործական ընկերութիւնք, կրնան հաւաքաբար  
ընկերութեան Թ. զ. Թ. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. Պատուոյ  
անգամ ընտրուի:

Փաստար Զերազ

Փարբիէլ Նորատունկեան

## ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին  
տեսութիւն: Նամակ Զալալօղլուն: Ներքին  
լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Repu-  
blique Française» լրագիրը հայ կաթողիկոսների  
մասին: Կ. Պոլսի ազգային ժողովի նիստը:—  
Ս. շ. Ե. Կ. Ի. Գ. Բ. Դ. Զ. Ը. Յայտարարութիւններ:  
—Տեղեկացոյց:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Սան-Ստեֆանոյ դաշնագիրը  
ամբողջ Բալկանիայից մի իշխանու-  
թիւն էր կազմել, որ պէտք է  
կառավարվէր ժողովրդական ոյ-  
ժերով: Բերլինի կոնգրէսը այդ-  
պիսի դրութիւնը անյարմար գտ-  
նելով, վճռեց բաժանել Բալկա-  
նիան երկու մասերի՝ Արեւելեան  
Բուլղարիա և Բալկանական իշխա-  
նութիւն, որոնցից առաջինը պէտք  
է կառավարվէր թիւրք գլխաւոր  
նահանգապետից թիւրքաց կանս-  
նաւոր զօրքերի օգնութեամբ, ու-  
րոնք պէտք է գրաւէին Բալկա-  
նեան անցքերը: Վերջին ժամա-  
նակները նկատվեցաւ, որ այդ  
կարգադրութիւնը բոլորովին ան-  
գործադրելի է, որովհետեւ եթէ  
թիւրքաց զօրքերը մոնէին Արե-  
ւելեան Բուլղարիա, այդ երկրում  
պէտք է ապստամբութիւն ծագէր:  
Ի նկատի ունենալով այդ հան-  
գամանքը ուսաց կառավարու-  
թիւնը առաջարկեց գրաւել Բուլ-  
ղիա եւրոպական ընդհանուր զօր-  
քերով բայց Ֆրանսիա և Գեր-  
մանիա չը համաձայնեցին ուղար-  
կել իրանց զօրաբաժինները յիշեալ  
երկիրը և այդպիսով ուսաց կա-  
ռավարութեան առաջարկութիւնը  
մնաց անգործադրելի:

Մի քանի ժամանակից յետոյ  
ուսաց զօրքերի մնացորդները  
պէտք է հեռանան Բալկանիայից,  
իսկ այդ երկրի վեճակը զեռ ևս  
կարգադրված է: Երազիրներից  
մի քանիսը առաջարկում են կա-  
ռավարել Արեւելեան Բուլղարիա  
թիւրք նահանգապետի իշխանու-  
թեամբ, միայն թէ կարգը պահ-  
պանող զօրքերը բալկանացիներից  
լինեն կազմած:  
Նախկին կառավարութիւնը

այժմ բաւական դժուար գրու-  
թեան մէջ է: Չը կայ գրեթէ  
ոչ մի պետութիւն, բացի Աւստ-  
րո-Սլոնգարիայից, որի հետ Նա-  
ղիան հաշտ լինէր: Միայն Աւստ-  
րո-Սլոնգարական պետութեան հետ  
Նաղիան դաշնակցութիւն է կա-  
պել:

Նաղիական զօրքերի դրութիւ-  
նը Աֆգանիստանում շատ չեն  
լաւացել էմիր Հիր-Ալիի մեռնե-  
լուց յետոյ, ոչինչ չէ լսվում թէ  
արդէօք անգլիական զօրքերը ար-  
շաւում են Կաբուլի վրա թէ ոչ:  
Մի և նոյն ժամանակ լուր է  
տարածված, որ Եւրոպա-խան  
պատրաստվում է բոլոր ոյժերով  
ընդգրկմանալ անգլիացիներին, նա  
պակասեցնում է պալատական և  
այլն աւելորդ ծախսերը, դրամը  
պատերազմի վրա գործածելու հա-  
մար:

Աֆրիկայում անգլիական զօր-  
քերը զուլուների դէմ անդադար  
անցաճողութիւնների են պատա-  
հում: Վերջին ժամանակները զու-  
լուները խեղին նրանցից բոլոր  
պաշարները, որոնք տանվում էին  
Լիփվի մօտ պաշարված զօրքե-  
րին: Նաղիայի հետ նորերում  
միացրած Տրանսիլանի հանրա-  
պետութեան մէջ ապստամբու-  
թիւն է ծագել Ֆրանսիայի և  
Նաղիայի մէջ նոյնպէս անբաւա-  
կանութիւն է ծագել, որովհետեւ  
առաջին պետութիւնը գրաւել է  
Մատակոնդ կղզին, որ անգլիա-  
ցիք իրանց սեփականութիւն էին  
համարում: Ապրիլի 7-ին Լիփվի-  
տոսի խեղիվ հեռացրեց իր մի-  
նիստութենից անգլիական հա-  
ւատարմատար Ուիլսոնին, որ նոյն-  
պէս անբաւականութեան մի ա-  
ռիթ է:

Ֆրանսիայի քաղաքական կեան-  
քը հանգստացել է: Ամենաշա-  
նաւոր հարցերի վճռելը, օրինակ  
ազգային ժողովների Փարիզ տե-  
ղափոխելը, հողեւորականութեան  
ազդեցութեան սահմանափակելը  
կրթութեան վրա, յետաձգված է:  
Ազգային ժողովը թոյլատրեց կա-  
ռավարութեան 300,000 ֆրանկ  
կրեդիտ կօմունայի պատճառով  
պատրվածներին օգնութիւն հասց-

նելու համար, երբ նորա կը վերա-  
դառնան:

Վերջին ժամանակները լու-  
գիրները յամառութեամբ լուր են  
տարածում, որ եւրոպական չորս  
պետութիւնների մէջ երկու հակա-  
ռակ դաշնակցութիւններ են կազմ-  
ված: Մի կողմից Նաղիա և Աւ-  
ստրո-Սլոնգարիա, իսկ միւս կող-  
մից Գերմանիա և Ռուսաստան:

Վ. Տ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԶԱՆԱԼՈՂՈՒՅՑ

23 մարտի

Նս իմ անցեալ նամակների մէջ յիշած էի,  
որ Զալալօղլին թէ և ունեցած է և այժմ ևս  
ունի 3—4 մասնաւոր ուսումնարաններ և այդ  
մասնաւոր ուսումնարանները հաստատ եկամուտ-  
ներ չունենալով շատ անգամ չեն կարողացած  
և չեն էլ կարողանայ ունենալ երկար տևողու-  
թիւն, սակայն պէտք է գիտեցած, որ Զալալօղ-  
լիցիք՝ մանաւանդ նորերը, բաւական ժամանակե-  
ի վեր յղացած էին իրանց մէջ մէկ ցանկութիւն՝  
կազմել բաւականին նշանաւոր գումար, որի տո-  
կոսով կարողանային մշտապէս կառավարել մէկ  
տղայոց և մէկ օրիորդաց ուսումնարան: Բայց  
որ հասարակաց և ազգային գործերի մէջ չէ  
երեցած անհամաձայնութիւններ ու դժուարու-  
թիւններ, որ հասարակաց և ազգային գործերին  
կապանութիւնը և անձնական շահերը փնտրե-  
լին հասցրած ու երեսի վրա թողած, որ սա  
ևս նոյն վեճակն չենթարկվէր: Վերջինս  
ու հնութիւնը մէկ կողմից և ամեն մէկ անհատի  
կապանութիւնը ու մեծամտութիւնը միւս կող-  
մից երկար ժամանակ մէկգեղեւոր դիմադրելով և  
ժողովրդը զանազան կուսակցութիւնների բա-  
ժանելով գործը մինչև ցայսօր անկատար թո-  
ղին:

Ըսածը կատէ՛ լու է ուշ, քան թէ երբեք:  
Նս ահա այս մեծի պահոց օրերին մեր Զալա-  
լօղլու կուսակցութիւնները սթափվելով և զգա-  
լով հասարակաց օգուտը թողին ամեն մէկ  
իրանց անձնական կրքերը և շահերը, նորերը  
ու հնրը հաշտվելով միմեանց հետ սերտ սի-  
րով ձեռք տուին մէկ մէկու աշխատելու համար  
ընդհանուր օգտին: Ազգային շինական ժողով  
և ընտրելով իրանց մէջէն հոգաբարձուներ ու-  
սումնարանաց պ. պ. Եզրը Քալանթարեանցին,  
Մովսէս Խան-Աղեանցին, Սարգիս Տէր-Վրի-  
գորեանցին և Սարգիս Հակոբեանցին տուին  
նրանց լիակատար իրաւունք ըստ խղճի և գե-  
տութեան իրանց ժողովել մէկ գումար, որով  
Զալալօղլին կարողանայ ունենալ մշտապէս եր-  
կու ուսումնարան:

Սեր նորերի երիտասարդ հոգաբարձու-  
ները բոլորովին արգարացին ժողովրդի իրանց  
վրա գրած յոյսը, որովհետեւ երկու օրվայ մէջ  
ժողովեցին ու թ հազար բուրբուջ աւելի և անմի-  
ջապէս տուին շահեցողութեան հաւատարմ վա-  
ճառականաց: Եթէ տեսնէիք թէ ինչ սիրով և  
ուրախութեամբ նուիրատուները իրանց քսակնե-  
րը կը բանային, եթէ տեսնէիք թէ այն օրերը  
Զալալօղլու ուսումնասիրաց խումբը ինչպէս էր  
ոգևորված, այն ժամանակը կը զարմանայիք և

կը հասկանայիք, որ հոնք վաղուց էր պատ-  
րաստ, բայց մշակներ չը կային: Այս հանգա-  
նակութեան չը կարողացան մասնակցել աղքատ  
գասը և մի քանի յամառ և մոլորեալ պարոններ,  
այսու ամենայնիւ մենք չենք վհատում, որով-  
հետեւ նրանք ևս իրանց ժամանակին ստրկանա-  
լով ճանապարհ կը գան. նոյնպէս յուսով ենք,  
որ աղքատներն ևս չը կենային իրանց լուսման  
ուսումնարաններին քացվելով տեսնելէն յետոյ:  
Սենք աւելի մեծայայտ ենք մեր ջալալօղջի պէս  
ազգասէր պարոնների վրա, որոնք թէև զանա-  
զան կողմերում գտնվում են արքունի պատուա-  
ւոր պաշտօններին մէջ, սակայն թէ այստեղ  
իրանց ծնողաց և ազգականաց այցելութեան  
եկած ժամանակները և թէ իրանց ծառայու-  
թեանց տեղերից մեղ յանդիմանելով կը յորդո-  
րէին այս բարի գործքի համար և այժմ ան-  
տարակոյս ենք, որ նրանք իրանց փախազը կա-  
տարված տեսնելով, մեղ իրանց սիրելի հայրե-  
նակիցներին նիւթապէս օգնելուց չեն փախչի  
և առատ նուէրներով կը խրախուսեն առաջ  
վարել մեր սկսած ազգաշէն գործը, որի մասին  
իր ժամանակին կը հաղորդեն: Այսու հետք, որ  
մեր ջալալօղջու տիկիներն ևս չը կամենալով  
յետ մնալ այս ազգային գործից, մտադիր են  
այս զատիկ հանգիստը տօնին իրանց մէջ հան-  
գանակութիւն բանալ. նրանց ժողոված գումարի  
համար ևս կը հաղորդեն իր ժամանակին:

Այսքան ժողոված գումարը և ապագայ ժո-  
ղովելիքը պիտի մնան անձեռնմխելի և նրա տո-  
կոսը միայն պիտի գործադրելու ուսուցչաց ուժիկ և  
ուրիշ ծախսերի վրա. իւրաքանչիւր աշակերտ  
վճարելու է ամսական 1—2 րուբլ. կան նոյնպէս  
և ուրիշ գիւղական եկամուտներ, որ պիտի յատ-  
կացվեն նոյն ուսումնարաններին: Սեր պատուելի  
հոգաբարձուները այսպէս կարգադրելուց վերջը  
խնդրագրով գիծեցին վիճակաւոր առաջնորդին,  
որ նորին սրբազնութիւնը շուտով ուղարկէ պ.  
թեմական տեսչին ջալալօղջի ուսումնարանները  
բանալու և պաշտօնական կերպով իր իրաւասու-  
թեան ներքոյ ընդունելու:

Սենք մեղ իրաւունք ենք տալի կարծելու,  
որ հոգեւոր իշխանութիւնը անտարբեր չի մնայ  
ջալալօղջու ուսումնարանների համար և յատկաց-  
ներով նրանց եկեղեցու եկամուտի մէկ մասը  
կօգնէ նրանց առաջ գնալուն: Աւսումնարանները  
առ այժմ կառավարելու ենք առանձին վարձով  
աների մէջ, իսկ յետոյ առանձին գումարով և  
մեր անտեսական միջոցներով կառուցանելու ենք  
մէկ յարմար տեղ:

Սեր ջալալօղջիքը ուսումնարանների գործը  
այսպէս կարգադրելէն յետոյ չը կարողացան  
պաշտ արքով նայել իրանց հոյակապ, բայց կիսով  
չափ քանդված եկեղեցու վրա, ուստի ընտրեցին  
այդ մասին հոգաբարձու պ. պ. Ղաւ. ջաղի-  
նեանցին: Սնաց. Սահակեանցին, Բար. Սար-  
սիրոսեանցին և Գան. Գաւթեանցին և սուրբ  
նրանց նոյն իրաւունքը որ տուած էին և ու-  
սումնարանի հոգաբարձուներին, սրանք ևս  
իրանց պաշտօնը արիւթեամբ և սրբութեամբ  
կատարելով ժողովեցին 4000 ր. և այս գարնան  
մտադիր են շինութեանը ձեռք տալ:

Եւ ահա այսպէս, ջալալօղջիք, որ վեր առ-  
նելով արքունի հարկատուաց հետ և աղետա-  
կանաց դասը բաղկանում է 150 գերգաստանից,  
այսպիսի կարճ միջոցում կարողացաւ ազգային  
գործոց համար զոհել 12,200 ր. պէտք է այս  
ևս գիտենալ, որ այս հասարակութիւնը սրանից  
մէկ երկու ամիս առաջ ճանապարհի շինութեան  
համար նուիրած է 4000 ր., որ ընդամենը կանէ  
16,200 րուբլի, բայց առնելով և ուրիշ մանր ու-  
կարեւոր նուիրատուութիւններ: Այսուհետեւ կա-  
րող եմ համարձակ ասել, որ ջալալօղջու ու-  
սումնարանները այսպիսի միջոցներ ունենալուց  
յետոյ կարող են ունենալ ուսեալ և բարեխղճ  
ուսուցիչներ:

Լ. օտեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի ապրիլի 19-ին թիֆլիսի ա-  
մարային թատրոնում հայ թատրոնասէրների  
խումբը կը տայ մի ներկայացումն յօդուս  
Հաւաքարի սուրբ Մարիամեան օրիորդական

ուսումնարանի: Ներկայացումն կազմած է հե-  
տեւեալ պիեսներից. «Սէրը բժիշկ է», Մօլերի,  
«Աշխարհային երեկոյ», իշխան Բէհրուզեանի  
հաւաքածուից, և «Թախած ոսկրիչ» հեղ.  
Ա. Նահապետեանի: Անտարակներէն մէկն ժա-  
մանակ պ. Գ. Չմշկեանը կը կարդայ «Հայերու  
վիշտը»: Ներկայացումը մասնակցում են օրի-  
որդներ Ն. Տէր-Մարկոսեան, Վ. Պաշայեան,  
Ն. Աշխարումեան և Ն. Ներմազեան: Ներ-  
կայացման կրկնութիւնները վաղուց շարու-  
նակվում են: Հաստատ աղբիւրներից տեղեկա-  
նում ենք, որ ներկայացումն լաւ է պատրաստ-  
ված: Տեղերի գները պատուելի սիրողները բե-  
նեֆիտի են նշանակել, որովհետեւ, ինչպէս լը-  
սում ենք թատրոնի համար մեծ վարձ (300  
ր.) են տալիս: Նորհուրդ ենք տալիս հասա-  
րակութեանը ներկայ գտնվել ներկայացման:

ՍՍԱՎՐՈՊՈԼԻՅՑ մեղ հաղորդում են, որ այն-  
տեղի հասարակութիւնը երէկ չէ տնտում  
Ս. Վարդանանց տօնը: Թղթակիցը ցանկու-  
թիւն է յայտնում, որ իր համաքաղաքացի-  
ներն էլ հետեւին այլ քաղաքների բնակիչ-  
ներին օրինակին:

Մեղ գրում են ՍՍԱՎՐՈՊՈԼԻՅՑ. «Անցեալ ձը-  
մեւը միայն երեք անգամ ձիւն եկաւ: Դիֆ-  
տերիտ անուանված հիւանդութիւնը չափա-  
զանց շատ գոհեր է տանում: Պաշտօնական  
տեղեկութիւններից երեւում է, որ անցեալ  
տարվայ սեպտեմբերից մինչև ներկայ փետր-  
վարը այդ հիւանդութեանից 960 անձի երե-  
խաներ են վախճանվել: Այստեղ «Մշակ» կար-  
դացողներ շատ կան, բայց բաժանորդներ առ-  
կաւ: Նրբ այստեղի հայերին առաջարկում եմ  
զրկել լրագրին, չեն համաձայնում, պատ-  
ճառ բերելով լեզուի չիմանալը, իսկ ուրիշ-  
ների համարները ամբողջապէս կարդում են:  
Կրագրին փող տալը ստալիօսօյցիք աւելորդ  
շտայլութիւն են համարում: Այստեղ ինք-  
նասպանութիւններ շատ յաճախ են պատա-  
հում, օրերումս իրան սպանեց մի 20 տա-  
րեկան ուսու երիտասարդ, որ շատ հարուստ  
ծնողների որդի է: Կնքնասպանութեան պատ-  
ճառը հօր բռնակալութիւնն է եղել:»

Մեղ հաղորդում են ՆՈՒՌՈԼԻՅՑ, որ Ղարա-  
բաղի թեմական տեսուչ Արիստակէս Վ.  
Սեդրակեանը ոչինչ ուշադրութիւն չէ դարձ-  
նում քաղաքի և շրջակայ գիւղերի ուսումնա-  
րանների վրա:

Մեղ հաղորդում են Վ. ԱԳՈՒԼԻՍԻՅՑ, որ  
այնտեղի երկու ուսումնարանների հիմնա-  
դիրները 7 անձերից կազմված մի մասնաժո-  
ղով են ընտրել, որ պէտք է աշխատէ բա-  
րեկարգել ուսումնարանները:

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՅՑ մեղ գրում են. «Մեծ ու-  
րախութեամբ լսում ենք, որ Վեհափառ Վա-  
թողիկոսը ի նկատի առնելով մեր հասա-  
րակութեան կողմից մի քանի անգամ ներկա  
յացրած խնդիրները հայր Մովսէս քահա-  
նայի դէմ, հրաժարեցրել է նրան պաշտօնա-  
վարութենից Գողթեանց ամբողջ զաւառում:  
Ասում են, որ այդ քահանան իրան հիւանդ  
ձեւացնելով խնդրել է Վեհափառից մի քանի  
օրով յետաձգել իր դուրս գալը Ագուլիսից:  
Նրեի քահանան մտադիր է դարձեալ մի  
քանի անկարգութիւնների անել:»

Միխեյսնի տպարանը, որտեղ մենք ան-  
ցանք, չը նայելով որ ունի բաւական տուեր,  
բայց դարձեալ ձուլել է տալիս մեր թերթի  
համար մանր, կօր պ ու ս աւիած տառերը:  
Յոյս ունենք որ մի շաբաթից յետոյ տառերը  
ձուլած պատրաստ կը լինեն:

Լսում ենք որ պրօֆէսոր Բէկէր այլ ևս  
տալու չէ թիֆլիսի Ֆրանսիական ցիբիկ մէջ  
իր ներկայացումները: Լսում ենք որ պարոնը

ուրիշ գահլիմ է որոնում: Նրբ որոշված կը  
լինի թէ որտեղ է տալու նա իր ներկայա-  
ցումները, մենք այդ մասին կը յայտնենք մեր  
ընթերցողներին:

Արծրունու գաղթելում շինվող թատրոնը  
գրիթէ պատրաստ է արդէն: Արդէն գրված  
են արժուներ և բաղկաթուղները: Թատրոնը  
շատ զեղեցիկ տեսք է ստացել: Մնում են մի  
քանի մանրամասներ վերջացնելու:

Լսում ենք որ թիֆլիսի Կրուժոֆի այս  
տարվայ ուսու դասախօսների խումբը գիտա-  
ւորութիւն ունի կազմել դասախօսների մի  
մշտական մասնաժողով և հրաւիրել իրանց  
ձեռնարկութեանը մասնակցելու համար և  
հայ դասախօսներին: Ասում են որ այդ միջ-  
տական հրապարակական դասախօսութիւննե-  
րը կը կարդացվեն Արծրունու թատրոնի  
գահլիմում:

Մեղ խնդրում են յայտնել որ Ֆրանսիա-  
կան «Les Vosges» շոքեւարը, որի կապիտանն  
է պ. Պալու, և որ պատկանում է «Paquet»  
ընկերութեանը դուրս է գալիս ՓՈԹԻՅՑ ապ-  
րիլի 19-ին (մայիսի 1) դէպի Կ. Պօլս և  
Մարսել, եթէ երանակը աջող լինի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«RÉPUBLIQUE FRANÇAISE» ԼՐԱԳՒՐԸ  
ՀԱՅ-ԿԱՌՈՒԹԻՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր վերջին համարներից մինի մէջ խօսե-  
լով հայ-կաթօլիկ հերձուածողների մասին  
Թիւրքիայում, որոնց անդալուսեան, հա-  
սուհեան անուանված մասը, աջողութիւն  
ունեցաւ, մենք ասացինք որ սուրբ աթոռը  
նշանաւոր յաղթութիւն արաւ արեւելքում:  
Նւ ձմարիտ, Բ. Կրան ձեռքով, օտար պե-  
տութիւնների զրգմամբ, Վատիկանի պա-  
հանջներին բաւականութիւն տալը, ոչ թէ  
միայն հայոց համայնքին հասցրած մի վճառ-  
կան հարուած կարող է համարվել, բայց  
գործնով Բ. Կրան հարուածում է առանց  
բացառութեան բոլոր միացած կաթօլիկ հա-  
մայնքները արեւելքում: Եթէ պապը իր գրչի  
մի շարժումով կարողացաւ տալ ն ու վրա  
անել եկեղեցական վարչութեան ամբողջ սիս-  
տեմը, որ վայելում էր Կ. Պօլսի հայ-կաթօ-  
լիկ համայնքը, այլ ևս ոչինչ չէ կարող  
նրան արգելել ապագայում հիմնվելով այդ  
գեղադր նախնիքի վրա, իսկ նոյն դա-  
ւանութեան քրիստոնեայ միւս համայնքնե-  
րից իրանց դարեւոր արտօնութիւնը վարել  
իրանց քաղաքական գործերը և պահպանել  
իրանց կրօնական անկախութիւնը:

Այդ խնդրի մէջ կայ մի ուրիշ, աւելի նրբ-  
շանաւոր կողմ, քան թէ բուն աստուածաբա-  
նական բնաւորութիւն ունեցող խնդիր: Հա-  
սուն արեւան, սուրբ աթոռի անունով տի-  
րապետելով իր հայրենակիցների խղճի ա-  
զատութեան վրա, մի և նոյն ժամանակ մի-  
ջոց է ստանում տիրապետել և նրանց զը-  
պանների վրա: Այդ տեսակ զարմանալի խառ-  
նուրդ հայ-կաթօլիկ համայնքի քաղաքական  
և կրօնական գործերի կառավարչութեան,  
թիւրքերի ձեռքով Բայանի տուած վարչութեան  
եղանակի պատուի է: Մէկին  
ձեռք տալ, նշանակում է դիպչել երկրորդին  
և որովհետեւ Վատիկանը նոյնքան սեր ունի  
դէպի այս աշխարհի բարիքները, որքան իր  
հոգեւոր հեղինակութեան աշտպան է, դորա-  
նից հետեւում է որ Հասունին տուած իրա-  
ւունքը յանձնում է պապի կամեցականու-  
թեանը այն բոլոր գումարները, որոնց վայել-

լը, և գործադրութիւնը մինչև այժմ համայնքի  
ձեռքումն էր: Ահա, մի քանի բաւերով, այդ  
անձնութեան բացատրութիւնը. Բ. Կրանը  
իրաւունք էր տուել իր հպատակ կաթօլիկ  
հայերին յանձնել իրանց քաղաքական գոր-  
ծերի վարելը իրանց միջոց ընտրված առաջ-  
նորդին: Բայց որովհետեւ Բ. Կրան կամքով  
այդ առաջնորդը պէտք է անպատճառ մի  
հոգեւորական լինէր, հայերը բնականապէս  
ստիպվեցան միայնել մի և նոյն ձեռքերի  
մէջ իրանց թէ քաղաքական և թէ կրօնա-  
կան գործերի վարելը: Հայոց պատրիարքը,  
ուրեմն, ուրիշ մի ոք չէր, եթէ ոչ մի քա-  
ղաքական պետ, ազգից նոյն իսկ ազգի պետ-  
քերի համար հարկերի հաւաքելը, ուսումնա-  
րանների և հիւանդանոցների պահպանելը,  
քաղաքական դատաւարութիւնները պատ-  
րիարքի հսկողութեամբ էին կատարվում: Մի  
խօսքով Կ. Պօլսի հայ բայանները (միայն  
մայրաքաղաքի հայերին պատկանում էր պատ-  
րիարք ընտրելու իրաւունքը), զուրկ լինելով  
հասարակական հաւասարութեան իրաւուն-  
քից, միայնութիւն էին գտնում դորա  
մէջ որ վայելում էին մի տեսակ վարչական  
ինքնակարութիւն պատրիարքի և ընտրված  
խորհրդի առաջնորդութեամբ:

Համայնքը, ուրեմն, խաղաղութեամբ վա-  
յելում էր իր ստացած իրաւունքները, երբ,  
մի գեղեցիկ օր, 1866 թիւն, Հոսմի մի կօն-  
դակ տասնց այլեպլութեան խից նրանից  
այդ արտօնութիւնը: Եթէ խօսքը միմիայն  
վարդապետութեան խնդրի վրա լինէր, մա-  
նաւանդ եթէ հոգեւոր հեղինակութիւնը  
միացած չը լինէր ազգային վարչական իրա-  
ւասութեան հետ, կաթօլիկ հայերը դեռ  
կարող էին խոնարհվել սուրբ աթոռի հո-  
գեւոր իրաւասութեան առջև: Բայց դորանով  
փառնող էր երթարկվում ազգի նիւթական  
բարօրութիւնը, բռնաբարվում էին համայնքի  
ազգային սեփականութեան, կայքերի իրա-  
ւունքները: Նւ այդ էր պատճառը որ Կ. Պօլ-  
սի կաթօլիկ հայերի մեծամասնութիւնը բո-  
ղոքեց այնքան մեծ եռանդով և այդ եռան-  
դը թուլացած չէ, չը նայելով տասնութերեք  
տարվայ յուսահատ կռիւն: Ռեռ այսօր նրանք  
իրանց յաղթված չեն համարում և չը նա-  
յելով որ Հասունը անուանի կերպով ազգի  
պետ է համարվում, սուրբ աթոռը դեռ  
շատ դժուարութիւններ կը կրի իր անար-  
դար պահանջողութիւնները ձանաչել տալու  
համար: Բաւական է յիշել որ կաթօլիկ հա-  
յերի ազգային կայքերը և սեփականու-  
թիւնները, նրանց մանուկների կրթութեան  
գործը, համայնքի իր միջոց հաւաքվող և  
ընդհանուր պէտքերի համար գործածվող  
դրամական առատ տուրքերը, այդ բոլորը  
կանցնի հարստահարող կղերի ձեռքը, — և այն  
ժամանակ չէ կարելի չարաբարանել բողոքող-  
ների պահանջողութիւնները: Այսուհետեւ  
Հոսմի օրէնքներ կը թնկարի համայնքին,  
Վատիկանը կը վարի նրա կայքերը և կը  
գործածի նրա փողերը, ինչպէս կը կամենայ:  
Հասկանալի է որ հայերին փոյթ չէ իրանց  
նուէրներով նպաստել կաթօլիկութեան տա-  
րածմանը Զինատանում, կամ իրանց տուր-  
քերով պահպանել Հոսմի կարդիմալների ապ-  
րուստը: Բայց անհասկանալի է որ Ֆրանսիա-  
կան ազգեցութիւնը արեւելքում նպաստում է  
իր զիպոմատիական գործակալների ձեռքով  
այդ տեսակ անարդարութեան իրադրութեան:  
Եթէ այն հարստահարութիւնը որ կրելու են  
այսուհետեւ կաթօլիկ հայերը ճնշել մի-  
միայն հայոց համայնքի վրա, այդ դեռ մի  
սահմանափակ չարիք կը լինէր, բայց առիթ  
չը կայ կարծելու որ սուրբ աթոռը զուրկ  
իր ձգտումները, այդ տեսակ զեղեցիկ ձանա-  
պարհի վրա օտար դնելուց յետոյ: Հայերից յե-  
տոյ նա կաշխատի բռնաբարել և քրիստոնեայ  
այլ համայնքների իրաւունքները, և որովհե-  
տեւ, ինչպէս երեւում է, մի դաշն է կապված  
անհասկանալի թիւրքի և Ֆրանսիայի երկրիս

վրա փոխանորդի մէջ, միւս համայնքները շուտով բաժանելու են հայերի վիճակը: Ինչպէս երևում է նպատակ այդ անբարոյական զանազանութեան աջակցութեանը, նրա շանակվում է հետեւել «Ֆրանսիական քաղաքականութեան»:

Կ. ՊՈԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆՆԵՐՆԵՐ

Ազգային ժողովն ըստ հրաւիրանայ Կրօնական ժողովի՝ երէկ գումարեցաւ Վալարիայ եկեղեցին ընդ առժամեայ նախագահութեամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի:

Ժամը 7-ին առեանք բացուելով, նախընթաց Եւրոպայի ատենադպրութիւնը վաւերացանք և մէկ երկու ատենական գործողութիւններէ ետեւ, Ատենապետ փաշան ժողովին արտաքին կարգի գումարման պատճառներ և ներկայացուց խնդրոյն վիճակն իր ամեն հանգամանօք բացատրելու համար՝ հետեւեալ բանախօսութիւնն ըրաւ.

«Անցեալ նիստին՝ ժողովին վերադառնալու մարտին ծարութեան տենէն ետքի ձգեցիք բայց Կրօնական ժողովն իրաց այս վիճակին մէջ անդուստի փարզութեան անհնարին պատասխանատուութեան ներքեւ ընկնուել երկու շաբաթ արտաքին կարգի նիստ խնդրել բռնադատեալ խնդրեր էր Վատաստանական խորհրդոյ նախագահէն ձեռք հրաւիր կարգաւ և գրեւ էր ինչ ի գիտութիւն:

Ահաւասիկ իր նամակն.

(Նամակը կարգաւ էր ետեւ)

Ինչպէս կը տեսնուի, օրակարգին դարձեալ մի և նոյն խնդիրն է, որ առաջին նիստին բաւական վիճարանութեան տեղի տալէն ետքը՝ նիստն անբաւական և խնդիրն անպարտաւոր ըլլալով չը կրցաւ յանգիլ որոշման մը: Այսօր կրկին պիտի խորհիք այս նիւթին վրայ, բայց պարտ է ներկայ ունենալ ձեր աչաց առջին որ խնդիրը փափուկ է զանազան տեսակէտով և ծանրակշիւ ազդիւ համար, որ հազիւ սկսած է աշխարհ-փարական ասպարէզին մէջ զորոյնքով բայց մ'առնել միանգամայն և ստիպողական, զի այսօր վերջինն է ձեր 78-79 տարեկան շրջանի ժողովոյ, և եթէ այսօր վճռական որոշում չառած ձեզք երթաք ատենէս, անկերպարան վիճակ մէջ պիտի թողուք Ազգային գործերը: Ձեզ կը թողուի չափել ապագայի ձեր պատասխանատուութեան ծանրութիւնը, և ես իմ թեթեւեղութեամբ համար հարկ կը համարեմ խնդիրն անգամ մ'ալ պարզել ձեր առջին իր ամեն հանգամանքներով:

1. Ա. Պատրիարքն հրաժարական տուած է Բ. Կրան՝ պատճառելով որ մէկ կողմէն իր անձնական տկարութիւնը ստատիկապէս և միւս կողմէն իր գաւառացի ժողովուրդեան հարստահարութեան ազատելով ծրագրաւ փառ Սուլթանին հովանոյն ներքեւ անդորր կեանք մը շնորհելու համար մատուցուած թախանձակին խնդիրներն ընդունելու չարժանաւորով անկարելի կ'ըլլար և իրեն այլ ևս շարունակել Պատրիարքական պաշտօնը:

2. Բ. Կուռք Ս. Պատրիարքին հրաժարականը ընդունելով իրեն վերադարձուցած է. և խոտանալով Ազգին համար սպաւորութիւն, արգարութիւն և ամենայն բարեկեցութեան շարունակել իր պաշտօնը:

3. Ա. Պատրիարքը Բ. Կրան յորդորն և խոտանալն ընդունելով մինչև որ արդեամբ չը տեսնէ անոնց կրականացումը՝ Պատրիարքական պաշտօնը շարունակել անկարելի ըլլալը կրկին իր հրաժարագիրը փոխան դրուած է Կուռք:

4. Բ. Կուռք Սրբազանին այս հրաժարականն ալ թէպէտ և վճռաբար ընդունած է, բայց կրկին իրեն վերադարձուցած է. Ա.

Պատրիարքն ալ կրկին իր պաշտօնն ստանձնելով յարաբերութիւն սկսած է Բ. Կրան հետ. հետեւաբար պաշտօնական առնչութիւնները դադարման դատարարութեամբ Պատրիարքի հրաժարման խնդիրն առաջի քաղաքական աշխարհի տեսակ մը պաշտօնական բողոքի գոյն առած է Հայաստանի մէջ հարստահարութեան շարունակութեան և բարենորոգման յապաղման կամ որ նոյն է Պէրլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածին անգործարելի մնալուն դէմ: Այսպէս կը նկատեն այն հրաժարականը մեզի հետ ազգը համարէն և բոլոր Եւրոպական դաշինքը, որ ընդ յիշեալ դաշնադրութեան գործութեամբ Արեւելեան խնդրոյն ամեն պարագայից նախանշանդրութեամբ կը հսկեն կը տեղեկանան ի պաշտօնէ:

5. Ա. Պատրիարքն առ Ազգին ևս հրաժարական մատուցած է յառաջ քան զճաղատնային կանխիկ խնդրոյն, և ի վերջոյ, պիտաւոր պատճառ ցոյց տալով անձին տկարութիւնը:

6. Ազգը միշտ մերժած է Սրբազանին հրաժարականը՝ խոտանալով և հաւանելով ամեն ինչ որ դիւրութիւն կրնայ ընծայել անոր պաշտօնավարութեանը, և բաւական համարելով որ Ն. Սրբազանութիւնը Պատրիարք մնայ և բարձրէն հսկէ ազգային գործոց ուղղութեան:

7. Իսկ վերջին ժամանակներս տեսնելով որ Ա. Պատրիարքը Բ. Կրան ալ հրաժարական մատուցեր է, և պատճառաբանեալ հրաժարական, ոչ միայն կրկին չընդունել, այլ և անհնարին հռչակեց ընդունել Ա. Պատրիարքի հրաժարականը. զի եթէ ընդունել, լուծելայն մերժած պիտի ըլլար անոր պաշտօնական հրաժարականին պատճառաբանութիւնները, և այս չէր կրնար ընել զի իրեն համար ալ իրաւացի էին անոնք՝ ինչպէս իր Ա. Պատրիարքին:

8. Բայց Ա. Պատրիարքը տեսնելով որ մէկ կողմէ Բ. Կրան առջին հրաժարեալ մնալով չը կրնար յարաբերութեամբ գործել, և միւս կողմէն ազգին կողմէն իր հրաժարականն անընդունելի դատուելով կը պարտաւորի գործել իր պաշտօնական ընթացքն իր պաշտօնական հրաժարականին հետ ներդաշնակելու համար դադրեցաւ գործել նոյն իսկ ազգային ներքին գործոց շրջանակին մէջ:

9. Բայց փարզական ժողովներն որ գործակից և պատասխանակից են Ա. Պատրիարքին, տեսնելով իրաց այս վիճակը, և բոլոր պատասխանատուութեանց իրենց վրայ միայն ծանրանալը նկատելով ձայն բարձր և Ազգային ժողովէն դարձեւ խնդրեցին:

10. Ազգային ժողովը մտածելով որ Ա. Պատրիարքին հրաժարականը չէր կրնար ընդունել զի ասով ինչպէս վերջինս մ'առաջ լինէր, անոր պատճառ ցուցուած հարստահարութեանց շարունակումն և բարենորոգման յապաղումն ուրացած կըլլար, բայց չէր կրնար նաև ստիպել Նորին Սրբազանութիւնն որ շարունակէ իւր պաշտօնական գործեր, զի ասով Պատրիարքն իր հրաժարականը յետ կ'ընէր կըլլար առաջին Կրան, որն որ անկարելի էր պատճառներուն յարաւերութեան միջոցին, հրաւիրեց փարզութիւնն ամբողջ այսինքն Կրօնական և Քաղաքական ժողովներն հանդերձ պաշտօնական գլխով ազգին որ է Ա. Պատրիարքը հայրն, դարձանք ինք ցոյց տալ առաջարկութեամբ:

11. Վարչական ժողովը գինի խորհրդակցելու Ա. Պատրիարքին հետ՝ երկու տեսակ դարման բերին առաջարկեցին Ազգային ժողովին, որոց մէկուն Ա. Պատրիարքը մասնաւոր գրով համաձայնութիւն յայտնած էր կանխառ:

12. Ազգային ժողովը այն վերջին միջոցն ընդունեց հետեւեալ անօրէնութիւնն ընելով որ կը պարունակէր.

Ա. Ա. Պատրիարքին հրաժարականը չընդունել և անոր պատճառներուն բարձման

բողոք բառնալ և խնդիր մատուցանել առ Բ. Կուռք:

Բ. Առժամանակեայ հանգիստ տալ Ա. Նոր ազատ ձգելով Նորին Սրբազանութիւնը գործել առ հարկին ինչ որ պատշաճ կը դատէ իր պաշտօնին նկատմամբ, որ իրաւունքն իրեն վերապահեալ է ազգովին կատարելապէս:

Գ. Նախկինպէս դատէն փոխանորդ մը ընտրել Ազգ. ժողովով և նման յանձնել Ա. Պատրիարքին համապատասխան միջոցին և յանուն Նորին Սրբազանութեան անոր պաշտօնը վաւերէ ժողովոց նախագահելով ընթացիկ գործերը անօրինելով և պաշտօնական գործիւնները կընելով կամ ստորագրելով. վերջապէս փոխանորդութիւն ընելով Պատրիարքին՝ առաւել քան զոր Վատաստանական խորհրդոյ նախագահը՝ որ Սահմանադրապէս մի և նոյն տիպարը կը կրէ, չէր կրնար ընել իր շրջանակին մէջ:

Ահա այս անօրէնութիւնն է զոր ի գործ դրիք նախընթաց նիստերուն մէջ, բայց նոր ընտրի փոխանորդին հրաժարմամբ չը կրցաւ իւր նպատակին հասնիլ: Աստի այսօր պարտեղ վճռական և վերջական որոշում մ'առնուլ և խնդիրը լուծել կատարելապէս:

Ըստ իս խնդիրը պարզ է և անձնական. կամ պարզապէս քանդելու է այն քաղաքագիտական շէնքը՝ զոր այնչափ դժուարութեամբ բարձրացուցիք Պատրիարքին հրաժարականի աշխարհափարական դիմելուն վրայ, և Պատրիարքին հրաժարականն ընդունելով ուրիշ մը Պատրիարք կարգել, լուծել է ձեր անցեալն ուրանալ և ազգին ապագային պատասխանատուութիւնն ստանձնել և կամ քաղաքագիտական ճարտարութեան վրայ երկայնմտութեան և անձնախնդրութեան զոհողութիւն յաւելլով պահել այն դիմքը, և նորընտրի փոխանորդին հրաժարման ընդունելով ուրիշ մը կարգել փոխանորդ. ահա այս երկու կէտերուն վրայ խօսքերն ամփոփելու պայմանաւ վիճարանութիւնը կը բանամ և կը հրաւիրեմ Ատենախօսներն ի բեմ:

Ազգային ժողովն, որոյ ներկայ անդամոց թիւը 60-ի մօտեցած էր, Ատենապետ փաշային տուած այս կարեւոր և ողջախոհ բացատրութիւնները խորին ուշադրութեամբ լսելէ ետեւ, Մէրեթմարուի Ծարութիւն էջէն տին խօսք առնելով ոչ նուազ համաձայն և քաղաքագիտութեամբ, ինչպէս նաև ազգասիրական ոգով խնդրոյն ամեն հանգամանաց վրայ խորհրդածելով, հետեւեալ եզրակացութեան հասաւ, իրեն միակ բանաւոր, հնաբաւոր և ազգին շահուց համաձայն լուծում:

1. Ազգային ժողովն չունի իրեն համար Պատրիարքական հրաժարականի նոր խնդիր, զի մերժած է զայն արդէն ազգային շահուց պահանջման առջև:

2. Ազգային ժողովն չընդունի Գեր. Մատթէոս Կախիկոյանի հրաժարականն. և կը յանձնարարէ փարզութեան կրկին ժողովոց հրաւիրել փառ անմիջապէս ի գլուխ իւր պաշտօնին:

Ժողովը Մէրեթմարուի Ծարութիւն էջէն տին լսելէ ետեւ այլ ևս վիճարանելու հարկ չը տեսնելով միաբերան քուէ գրեց, և վերջոյն եզրակացութեան երկու կէտերը քուէի գրուելով ընդհանուր համաձայնութեամբ ընդունուեցան:

Ատենապետ փաշան քուէին արդէնքն հրատարակելէ ետեւ հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ, որ նոյնպէս միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Ներքեւ Սրբազան Պատրիարք է. Մատթէոս Կախիկոյան փոխանորդ է Պատրիարքութեան.

Կրօնական և Քաղաքական ժողովներն իրենց պաշտօնը կը շարունակեն սահմանադրապէս.

Խորհրդարանական յանձնախումբն իր պաշտօնը կը շարունակէ ըստ որոշման Ազգային ժողովոյն.

Թէ փարզական ժողովը և թէ Խորհրդա-

րանական յանձնախումբն իրաւունք ունին Պատրիարքին և Փոխանորդին հետ գործելու:

Պատրիարք, Փոխանորդ, Վարչական ժողովը և Խորհրդարանական յանձնախումբն պատասխանատու են իրենց գործողութեանց համար:

Սոյն քուէարկութիւնէն ետեւ՝ Ատենապետ փաշան ժողովին ներկայ շրջանը փակուած հրատարակեց յանձնարարելով փարզութեան, որ թէ Պաշայ թաղերէն և թէ գաւառներէն ընտրութիւնները փութացնէ մինչև մայիս 1. միանգամայն իւր միամեայ գործողութեանց վրայ տեղեկագիր մը պատրաստէ, որոյ անունն Ապիտակ տետր դնել յարմար դատեց:

Ատենապետ փաշան Գեր. Խորէն Նար-Պէյ սրբազան խօսք ուղղելով, սրտաբուխ ատենաբանութեամբ մը գովեց ժողովին մէջ տիրող պատկառելի լծութիւնն և միանաւոր միաբանական ոգին, որ պարագայից փափուկութեան և ծանրակշիւութեան առջև ճշմարիտ ազգասիրութեան և համաբերեղ քաղաքագիտութեան վեմ նկարագիրը կը ներկայացնէր և ապագային համար քաջաբերական քաղցր յոյսեր կուտար:

Խորէն Սրբազանի բանախօսութեանէն ետեւ՝ ժողովը ներկայ շրջանին փակման առթիւ շնորհակալութեան քուէ տուաւ Ատենապետ փաշային և ատենապետ գոյուեցաւ:

Ահա այսպէս գեղեցիկ և միեմարական կերպիւ փակեցաւ Ազգային ժողովը ներկայ շրջանը՝ միութեան սիրոյ և յուսոյ քաղցր տպաւորութիւն մը թողելով թէ ժողովական նայ և թէ ներկայ գտնուող հարեւաւոր ազգայնոց վրայ, որք իրաւամբ կրնէին իրարու թէ այսպիսի պատկառելի և արդիւնաւոր նիստ մը շատուց ի վեր տեսած էին:

(Ստախ)

### «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 ապրիլ: Այսօր 10<sup>1</sup>/<sub>2</sub> ժամին առաւօտեան Նիկոլայեֆսկայա երկաթ թուղով Մոսկվայի վայրով ուղևորվեցին դէպի Երևան նոյն Մեծութիւններ Կոյսը և Կայսրուհին:

ԲԵԼԳՐԱԿ, 11 ապրիլ: Սերբական զօրքերը Կրուշեվացից, Ալեքսինադից և Պրոխորէից, Խորվաթիայի առաջնորդութեամբ ուղարկվեցան արևմտեան զէպի որոնք ամբաստանաւորութիւններ զու: Արևմտեանը ջարդվեցան և ցրուեցան:

ԲՈՒԿԱՐԵՍՏ, 11 ապրիլ: Դորբուշան բուրովին մաքրված է ուսաց զօրքերից:

ՏՐԵՆԻՆ, 12 ապրիլ: Այսօր բոլգարական ազգային ժողովը ձեռնամուխ եղաւ սահմանադրութեան կրորդ ընթերցանութեան: Նախքան օրը ժողովը կը ցրուի: Պատգամաւորներ ընտրութիւնը, որոնց յանձնած կը լինի ընտրել իշխանին, կը կատարվեն ամբողջ Բոլգարիայում: Նոր ազգային ժողովը կանչված է 15 ապրիլի համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 ապրիլ: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 96ր. 75 կ., երկրորդ 95 ր., երրորդ 95 ր. 75 կ., չորրորդ 96 ր., ներքին 5% առաջին 5% փոխառութեան մասը 235 ր. 5., արեւելեան առաջին 93 ր. 25 կ., երկրորդ 93 ր. 37 կ., ոսկի 8 ր. 53 կ., Տրամադրութիւնը ամբար է:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՈՒՆԻ

Типографія А. А. Михельсона.